Funded by the European Union

THE MINISTRY OF ECONOMY OF THE REPUBLIC OF ARMENIA

International Trade Centre

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԱՐՏԱՀԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ինչպե՞ս օգտվել Եվրոպական միության՝ Հայաստանի Հանրապետությանը տրամադրված Առևտրի ազատականացման ժամանակավոր միջոցներից



Երևան, 2026թ. Հոկտեմբեր

Սույն հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակության համար բացառապես պատասխանատու է Միջազգային առևտրի կենտրոնը (ITC), և այն պարտադիր չէ, որ արտացոլի Եվրոպական Միության պաշտոնական տեսակետները:

Բովանդակություն

I. Հապավումներ 3
II. Ներածություն 3
III. Ու՞մ համար է նախատեսված ուղեցույցը 3
IV. Ի՞նչ է տալիս ԱԱԺՄ-ն համառոտ 3
V. Որ ապրանքը կարո՞ղ է օգտվել ԱԱԺՄ-ից 5
1. Քայլ 1. Որոշել ճիշտ ՀԱ ծածկագիրը 6
2. Քայլ 2. Ստուգել Հավելված I-ը կամ Հավելված II-ը 6
Աղյուսակ 1 կանոնակարգի հավելվածներ 6
3. Քայլ 3. Հաստատել հայկական արտոնյալ ծագումը 7
4. Քայլ 4. Ընտրել և պատրաստել ծագման ապացույցը 7
4.1. Ծագման ապացույցի ներկայացում 8
Աղյուսակ 2. Ծագման ապացույցի ներկայացման եղանակներ 8
4.2. ԳԱՀ-ում (REX) գրանցում 9
4.3. EUR.1 շարժման հավաստագիր ստանալու գործնական քայլերը 9
5. Քայլ 5. Կազմել արտահանման և ծագման փաստաթղթերի փաթեթը 10
6. Քայլ 6. Հավելված II-ի սակագնային քվոտաները 10
Աղյուսակ 3. Հավելված II-ի տարեկան քվոտաները 11
6.1. Ինչպես են կառավարվում սակագնային քվոտաները 11
7. Քայլ 7. ԵՄ ներմուծողի հետ համագործակցության շրջանակը 12
7.1. ԵՄ ներմուծման մաքսային ձևակերպում 12
8. Փաստաթղթերի պահպանում և ծագման ստուգում 13
9. Գործնական օրինակ 13
Օրինակ. 25 000 եվրո արժողությամբ խաղողի արտահանում 13
10. Արտահանողի ինքնաստուգման ցանկ 14
11. Սխալներ, որոնցից պետք է խուսափել 14
12. Հաճախ տրվող հարցեր 15
Հավելված 1. Ապրանքների արտոնյալ ծագման որոշման և հաստատման հիմնական կանոնները 18
Հավելված 2. ԱԱԺՄ-ից օգտվելու գործընթացի հոսքագիծ 21

I. Հապավումներ

1.	ԵՄ	Եվրոպական միություն
2.	ԱԱԺՄ	Առևտրի ազատականացման ժամանակավոր միջոցներ (անգլերեն՝ Temporary Trade-liberalisation Measures)
3.	ՀԱ	ԵՄ համակցված անվանացանկ (անգլերեն՝ CN)
4.	ԱԱՀ	Ավելացված արժեքի հարկ
5.	ԳԱՀ	Գրանցված արտահանողների համակարգ (անգլերեն՝ Registered Exporters System - REX)
6.	ԱՏԳ ԱԱ	Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ

II. Ներածություն

Սույն ուղեցույցը մշակվել է Միջազգային առևտրի կենտրոնի (ITC) կողմից՝ Եվրոպական միության (այսուհետ՝ ԵՄ) ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Հագուստի և ագրոբիզնեսի կայուն արժեշղթաների կառուցում Հայաստանում» ծրագրի շրջանակում Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) էկոնոմիկայի նախարարության հետ սերտ համագործակցությամբ:

Սույն ուղեցույցը կազմված է ԵՄ կողմից Առևտրի ազատականացման ժամանակավոր միջոցները (այսուհետ՝ ԱԱԺՄ) սահմանող (ԵՄ) 2026/2269 կանոնակարգի հիման վրա: Կանոնակարգը հրապարակվել է ԵՄ Պաշտոնական տեղեկագրում 2026թ. հոկտեմբերի 9-ին, ուժի մեջ է մտել 2026թ. հոկտեմբերի 10-ին և կիրառվում է մինչև 2028թ. հոկտեմբերի 11-ը: Սույն կանոնակարգի մասին տեղեկատվությունն արդեն իսկ հասանելի է ՀՀ Էկոնոմիկայի նախարարության կայքում:

Ուղեցույցում ներկայացված են ապրանքի դասակարգման, հայկական արտոնյալ ծագման հաստատման, ծագման ապացույցի պատրաստման, սակագնային քվոտաների ստուգման և ԵՄ ներմուծողի հետ համագործակցության հիմնական քայլերը:

Ուղեցույցը գործնական տեղեկատվական նյութ է և չի փոխարինում ԵՄ իրավական ակտերին կամ ՀՀ և ԵՄ իրավասու մարմինների պաշտոնական ցուցումներին:

III. Ու՞մ համար է նախատեսված ուղեցույցը

Այն նախատեսված է ՀՀ գրանցված արտադրողների և արտահանողների համար, ովքեր ցանկանում են օգտվել ԵՄ ԱԱԺՄ-ից:

IV. Համառոտ՝ ի՞նչ է տալիս ԱԱԺՄ-ն

ԱԱԺՄ (անգլերեն՝ Temporary Trade-liberalisation Measures) ժամանակավոր միջոցներ են, որոնցով ՀՀ ծագում ունեցող որոշ ապրանքների համար ԵՄ ներմուծման արժեքային մաքսատուրքը զրոյացվում է՝ կանոնակարգով նախատեսված պայմանների պահպանման դեպքում: Սա ՀՀ-ի բոլոր ապրանքների համար ընդհանուր ազատ առևտրի ռեժիմ չէ: Նույնպես այն պետք չէ շփոթել ԵՄ առևտրի այլ արտոնությունների համակարգերի հետ, օրինակ՝ ԵՄ Արտոնությունների ընդհանրացված և համալրված համակարգի (GSP+) հետ, որից ՀՀ-ն չի օգտվում 2022թ. հունվարի 1-ից: ԱԱԺՄ-ը առանձին, ժամանակավոր

իրավական ակտով սահմանված միջոց է: Յուրաքանչյուր գործարքի համար պետք է ստուգել տվյալ պահին գործող իրավական հիմքը:

(ԵՄ) 2026/2269 կանոնակարգը ունի երկու հավելված.

- Հավելված I. ցուցակում ընդգրկված և ՀՀ ծագում ունեցող ապրանքներն ազատվում են արժեքային ներմուծման մաքսատուրքից:
- Հավելված II. ութ ապրանքախմբերի համար արտոնությունը գործում է միայն սահմանված սակագնային քվոտայի շրջանակում:
- ԱԱԺՄ-ը ինքնին չի վերացնում այլ պարտադիր վճարները, ինչպես օրինակ ավելացված արժեքի հարկը (ԱԱՀ), կամ հակադեմփինգային կամ այլ առևտրապաշտպանական միջոցները, սանիտարական և բուսասանիտարական պահանջները, սննդամթերքի անվտանգության, մակնշման կամ տեխնիկական կարգավորման պահանջները:
- Արտահանման երկիրը ինքնին չի որոշում ապրանքի արտոնյալ ծագումը. անհրաժեշտ է բավարարել կիրառելի ԵՄ ծագման կանոնը և ունենալ դրա ապացույցը:

Ի՞նչ մաքսատուրքեր է զրոյացնում ԱԱԺՄ-ը, և որտե՞ղ կարող եմ ստուգել դրանք:


ԱԱԺՄ-ը զրոյացնում է ապրանքի մաքսային արժեքի նկատմամբ տոկոսով հաշվարկվող մաքսատուրքը: Սակայն, եթե տվյալ ապրանքի համար նախատեսված է նաև լրացուցիչ մաքսատուրք՝ հաշվարկված ֆիքսված գումարով (օրինակ՝ յուրաքանչյուր տոննայի համար), այն կարող է պահպանվել:

Օրինակներ՝

- **Ծոկոլադ, թխվածքաբլիթ և այլ հրուշակեղեն.** արժեքի նկատմամբ հաշվարկվող մաքսատուրքը զրոյացվում է, սակայն շաքարի, կաթի կամ ալյուրի պարունակությամբ պայմանավորված լրացուցիչ մաքսատուրքը կարող է պահպանվել:
- **Որոշ թարմ մրգեր և բանջարեղեն, օրինակ՝ ծիրան և խաղող.** եթե ներմուծման գինը ցածր է ԵՄ սահմանած մուտքի գնից, կարող է կիրառվել լրացուցիչ մաքսատուրք, որը ԱԱԺՄ-ը չի զրոյացնում:

Ինչպե՞ս ստուգել: Ապրանքի ՀԱ ծածկագրով և ծագման երկիրը՝ Հայաստան նշելով, ստուգեք կիրառելի մաքսատուրքերը ԵՄ մուտք շուկաներ՝ «Access2Markets» հարթակում:

V. Ո՞ր ապրանքը կարող է օգտվել ԱԱԺՄ-ից



Որոշման ընթացակարգը հետևյալն է.

- Սահմանեք ապրանքի ճիշտ համակցված անվանացանկի (այսուհետ՝ ՀԱ) (անգլերեն՝ CN) ծածկագիրը, որի սկզբի 6 նիշերը համընկնում են ԱՏԳ ԱԱ-ին՝ ապրանքի կազմի, մշակման, նշանակության և տեխնիկական հատկանիշների հիման վրա:
- Համեմատեք ծածկագիրը (ԵՄ) 2026/2269 կանոնակարգի Հավելված I և Հավելված II ցանկերի հետ:
- Եթե ապրանքը նշված չէ երկու հավելվածներից որևէ մեկում, ապա ԱԱԺՄ արտոնություն չի տրամադրվում:
- Եթե ապրանքը Հավելված I-ում է՝ ստուգեք ծագման կանոնը և ծագման ապացույցը:
- Եթե ապրանքը Հավելված II-ում է՝ լրացուցիչ ստուգեք տվյալ քվոտայի հասանելիությունը:
- Սահմանեք՝ կիրառվելու է EUR.1 շարժման հավաստագի՞րը, թե՞ հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը: Հաշվի առեք 6 000 եվրոյի շեմը և Գրանցված արտահանողների համակարգի (ԳԱՀ) (անգլերեն՝ Registered Exporters System - REX) կանոնները:
- Ներկայումս EUR.1 հավաստագիրը ՀՀ-ում դեռևս չի տրամադրվում, ուստի գործնականում կիրառելի է հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը. ԳԱՀ-ում գրանցված արտահանողը կարող է այն կազմել ցանկացած արժեքով առաքման համար, իսկ չգրանցված արտահանողը՝ միայն մինչև 6 000 եվրո առաքման համար:
- ԵՄ ներմուծողին փոխանցեք անհրաժեշտ առևտրային և ծագումը հավաստող փաստաթղթերը, որպեսզի նա կարողանա մաքսային հայտարարագրում պահանջել ԱԱԺՄ արտոնությունը:
- Պահպանեք ծագումը հիմնավորող բոլոր փաստաթղթերը՝ 3 տարի ժամկետով՝ հետագա հնարավոր ստուգման համար:

ԿԱՐԵՎՈՐ Է ***Հարկ է նշել, որ արտահանողն ինքն է պատասխանատվություն կրելու ապրանքի ծագման փաստաթղթերում տեղեկության իսկության համար:***

1. Քայլ 1. Որոշել ճիշտ ՀԱ ծածկագիրը

- ՀԱ-ն ԵՄ համակցված անվանացանկն է, որով ապրանքը դասակարգվում է ԵՄ մաքսային նպատակներով: ԱԱԺՄ-ի կիրառելիությունը որոշվում է ոչ թե միայն առևտրային անվանումով կամ Հայաստանում օգտագործվող ԱՏԳ ԱԱ ծածկագրով, այլ ԵՄ ներմուծման պահին կիրառելի ՀԱ ծածկագրով: Միևնույն ժամանակ պետք է նկատի ունենալ, որ ԵՄ համակցված անվանացանկի առաջին 6 նիշերը համընկնում են ինչպես ԱՏԳ ԱԱ, այնպես էլ ներդաշնակեցված համակարգի (HS) հետ:
- Եթե (ԵՄ) 2026/2269 կանոնակարգի հավելվածում ծածկագիրը նշված է «ex» նշումով, ինչպես օրինակ՝ «ex 080521», ապա արտոնությունը վերաբերում է այդ ծածկագրի ներքո դասակարգվող ապրանքների միայն այդ ծածկագրով դասակարգվող և նկարագրությանը համապատասխանող ապրանքների նկատմամբ: Արտոնության կիրառելիությունը որոշելու համար պետք է միասին դիտարկել և ՀԱ ծածկագիրը և դրան համապատասխան ապրանքի նկարագրությունը:
- Կանոնակարգի հավելված 1-ում ծածկագիրը կարող է նշված լինել աստղանիշով «*», ինչպես օրինակ՝ «01042010*»: Աստղանիշը ցույց է տալիս, որ տվյալ ապրանքի ներմուծումը շարունակում է ենթարկվել ԵՄ համապատասխան օրենսդրությամբ սահմանված պահանջներին: Այսինքն՝ մաքսային արտոնությունների տրամադրումը չի վերացնում սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական, բուսասանիտարական կամ ԵՄ օրենսդրությամբ սահմանված այլ պահանջները:
- Եթե դասակարգման հարցը կասկածելի է, մինչև արտահանումը քննարկեք այն մաքսային մասնագետի կամ իրավասու մաքսային մարմնի հետ: Անհրաժեշտության դեպքում ուսումնասիրեք պարտադիր սակագնային տեղեկատվություն ստանալու հնարավորությունը:

2. Քայլ 2. Ստուգել Հավելված I-ը կամ Հավելված II-ը

Աղյուսակ 1 կանոնակարգի հավելվածներ

Ստուգման հարց	Հավելված I	Հավելված II
Մաքսատուրքի արտոնություն	Արժեքային ներմուծման մաքսատուրքի ազատում՝ կանոնակարգի պայմաններով	Արժեքային ներմուծման մաքսատուրքի ազատում՝ միայն քվոտայի սահմաններում
Քանակային սահմանաչափ	Բացակայում է	Կա ապրանքին հատուկ քվոտա՝ տոննայով/օրացուցային տարով
Հիմնական լրացուցիչ քայլ	Ստուգել ծագումը և ծագման ապացույցը	Ստուգել ծագումը, ապացույցը և քվոտայի հասանելիությունը
Եթե քվոտան սպառված է	Չի վերաբերում Հավելված I-ի արտոնությանը	Քվոտային արտոնությունը հասանելի չէ. ներմուծողը պետք է ստուգի և վճարի կիրառելի մաքսային դրույքաչափը

3. Քայլ 3. Հաստատել հայկական արտոնյալ ծագումը

2026/2269 կանոնակարգի 2-րդ հոդվածի «ա» կետը հղում է կատարում Հանձնաժողովի պատվիրակված (ԵՄ) 2015/2446 կանոնակարգի 59–70-րդ հոդվածներին և Հանձնաժողովի կիրարկող (ԵՄ) 2015/2447 կանոնակարգի 113–126-րդ հոդվածներին: Այս հոդվածները սահմանում են ծագման և ծագման ապացույցի համապատասխան շրջանակը: Վերջինս ամփոփ ներկայացված է ուղեցույցի հավելված 1-ում:

Արտոնյալ ծագման գործնական ստուգման հերթականություն.

1) Որոշեք արտահանվող ապրանքի ՀԱ ծածկագիրը:
2) Գտեք այդ ապրանքի համար կիրառելի ծագման կանոնը՝ հաշվի առնելով արտադրանքի տեսակը և օգտագործվող նյութերը:
3) Կազմեք օգտագործված հումքի և բաղադրիչների ցանկը՝ նշելով դրանց ծագումը և մատակարարին:
4) Առանձնացրեք ոչ հայկական ծագում ունեցող նյութերը և հավաքեք դրանց գնման, ներմուծման ու մատակարարման փաստաթղթերը:
5) Նկարագրեք Հայաստանում իրականացված արտադրական գործողությունները և դրանց հիմքում ընկած արտադրական գրառումները:
6) Համեմատեք փաստացի արտադրական գործընթացը կիրառելի ծագման կանոնի հետ և փաստաթղթերով հիմնավորեք, որ կանոնը կատարված է:
7) Համոզվեք, որ կատարված գործողությունները բավարար են. միայն փաթեթավորումը, տեսակավորումը կամ պարզ հավաքումը կարող են չբավարարել կիրառելի կանոնին:
8) Ծագման ապացույցը տրամադրելուց առաջ ներքին ստուգում կատարեք և ապահովեք, որ առևտրային փաստաթղթերում ապրանքի նկարագրությունը, քանակը և նույնականացման տվյալները համընկնեն:

ԿԱՐԵՎՈՐ Է **«արտադրված է Հայաստանում» կամ «ուղարկվում է Հայաստանից» ձևակերպումը ինքնին բավարար չէ արտոնյալ ծագումը հաստատելու համար: Անհրաժեշտ է կիրառելի իրավական կանոնի հիման վրա հիմնավորել ծագումը:**

4. Քայլ 4. Ընտրել և պատրաստել ծագման ապացույցը



2015/2447 կիրարկող կանոնակարգի 113-րդ հոդվածի և 2026/2269 կանոնակարգի 2-րդ հոդվածի համակցված կիրառմամբ ԱԱԺՄ-ի համար նախատեսված ծագման ապացույցի ուղիները ներառում են EUR.1 շարժման հավաստագիր և հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը:

4.1. Ծագման ապացույցի ներկայացում

ԵՄ արտահանման ժամանակ Հայաստանից արտահանվող ապրանքների արտոնյալ ծագումը կարող է հաստատվել հետևյալ եղանակներից մեկով՝ սահմանված պայմանների պահպանմամբ:

- **Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր՝ մինչև 6 000 եվրո արժեքով առաքումների համար:** Եթե առաքման մեջ ներառված՝ ՀՀ ծագում ունեցող ապրանքների ընդհանուր արժեքը չի գերազանցում 6 000 եվրոն, հայտարարագիրը կարող է կազմել ցանկացած արտահանող՝ առանց ԳԱՀ-ում գրանցվելու: (ԵՄ 2015/2447 կանոնակարգ, հոդված 119(1)):
- **Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր՝ 6 000 եվրոն գերազանցող արժեքով առաքումների համար:** Այս դեպքում արտահանողը պետք է գրանցված լինի ԳԱՀ-ում և հայտարարագրում (հաշիվ-ապրանքագրի վրա) նշի իր ԳԱՀ գրանցման համարը՝ համաձայն (ԵՄ) 2026/2269 կանոնակարգի 2-րդ հոդվածի «ա» կետի: ԳԱՀ-ում գրանցվելու գործընթացը նկարագրված է ստորև 5.2 կետում:
- **Հաշիվ-ապրանքագրի հայտարարագրի պարագայում**, անկախ գումարի չափից, արտահանողը պետք է կատարի հետևյալ գրառումը «**The exporter of the products covered by this document** (առկայության դեպքում նշվում է ԳԱՀ-ում գրանցման համարը) **declares that, except where otherwise clearly indicated, these products are of Armenian preferential origin. Autonomous trade measures.»** Գրառումը համապատասխանում է ԵՄ պահանջին: Հայտարարագրում նշվում են նաև վայրը, ամսաթիվը, արտահանողի ստորագրությունը և անունը:
- **EUR.1 շարժման հավաստագիր:** Այն կարող է կիրառվել ցանկացած արժեքով առաքումների համար՝ առանց ԳԱՀ-ում գրանցվելու պահանջի: Սակայն ներկայումս ՀՀ-ում EUR.1 հավաստագրի տրամադրման կարգը դեռևս հստակեցված չէ: Մինչև պաշտոնական պարզաբանումը հետևեք ՀՀ էկոնոմիկայի նախարարության հրապարակումներին և օգտվեք հաշիվ-ապրանքագրի հայտարարագրից՝ վերոնշյալ պայմանների պահպանմամբ:

ԿԱՐԵՎՈՐ Է ***Հայտարարագիրը մի կազմեք ազատ ձևով՝ առանց պաշտոնական նմուշը ստուգելու:***

Աղյուսակ 2. Ծագման ապացույցի ներկայացման եղանակներ

Առաքման ընդհանուր արժեքը	Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր	EUR.1	ԳԱՀ գրանցում
Մինչև 6 000 եվրո ներառյալ	Կարող է կազմել ցանկացած արտահանող	Հնարավոր է, երբ գործարկվի ՀՀ-ում	Պարտադիր չէ
6 000 եվրոյից ավելի	Միայն ԳԱՀ-ում գրանցված հայաստանյան արտահանողը	Հնարավոր է, երբ գործարկվի ՀՀ-ում	Պահանջվում է, եթե ընտրվում է հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը

4.2. ԳԱՀ-ում (REX) գրանցում.

ԳԱՀ-ը ԵՄ գրանցված արտահանողների համակարգն է: ԱԱԺՄ-ի շրջանակում ԳԱՀ-ում գրանցումը թույլ է տալիս հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր կազմել ցանկացած արժեքով առաքման համար: ԱԱԺՄ-ի շրջանակում այն կարևոր է հատկապես այն դեպքում, երբ հայաստանյան արտահանողը ցանկանում է 6 000 եվրոյից ավելի արժեքով առաքման համար օգտագործել հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը:

Ինչպե՞ս գրանցվել ԳԱՀ-ում:

- Դիմեք ՀՀ Էկոնոմիկայի նախարարություն (ԵՄ հետ տնտեսական համագործակցության վարչություն)՝ պարզելու ԳԱՀ-ում գրանցման նպատակով գործող ընթացակարգը, դիմումի ձևը, ներկայացման եղանակը և պահանջվող փաստաթղթերը:
- Եթե նախկինում գրանցվել եք ԳԱՀ-ում, ապա նոր գրանցման անհրաժեշտություն չկա: Սակայն եթե արտահանվող ապրանքի մաքսային ծածկագիրը փոխվել է, կամ ցանկանում եք այլ ծածկագրի ներքո ապրանք արտահանել, կամ պետական ռեգիստրի վկայականում տեղի են ունեցել փոփոխություններ, նաև տնօրենի փոփոխություն, ապա ԳԱՀ տվյալների բազայում փոփոխությունների արտացոլման համար պետք է դիմել ՀՀ էկոնոմիկայի նախարարություն:
- Ներկայացրեք ԳԱՀ-ում գրանցման դիմումը՝ ներկայացնելով ընկերության գրանցման հասցեի, կոնտակտային և գործունեության տվյալների նույնականացումը հաստատող փաստաթղթերը՝ պահանջվող ձևով: Գրանցման գործընթացի մանրամասներին ծանոթանալու համար հետևեք ԳԱՀ-ում գրանցման ուղեցույցին:
- Ծանոթացեք ծագման կանոնները պահպանելու և համապատասխան գրառումները վարելու պարտավորություններին:
- Ստացեք ԳԱՀ-ում գրանցման համարը և նախքան հայտարարագիր կազմելը ստուգեք գրանցման վավերությունը:
- ԳԱՀ-ի տվյալները և փաստաթղթերը պահեք արդիական և փոփոխությունների մասին տեղեկացրեք համապատասխան մարմնին՝ պահանջվող կարգով:

4.3. EUR.1 շարժման հավաստագիր ստանալու գործնական քայլերը

- **Մինչև առաքումը** ՀՀ էկոնոմիկայի նախարարությունից ճշտեք՝ որ մարմինն է ընդունում EUR.1 հավաստագրի տրամադրման դիմումները, արդյոք ԱԱԺՄ-ի շրջանակում ընթացակարգն արդեն գործում է, և ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ: Մինչև ՀՀ-ում EUR.1 հավաստագրի տրամադրման ընթացակարգի պաշտոնական մեկնարկը՝ որպես ծագման ապացույց օգտագործեք հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը՝ սահմանված պայմանների պահպանմամբ:
- Պատրաստեք EUR.1 ձևաթուղթը և դիմումը՝ սահմանված ընթացակարգով:
- Կցեք ծագումը հիմնավորող նյութերը՝ արտադրական գրառումներ, հումքի և բաղադրիչների փաստաթղթեր, հաշիվներ, պահեստային տվյալներ և այլ պահանջվող ապացույցներ:

- Համոզվեք, որ դիմումի տվյալները համընկնում են հաշիվ-ապրանքագրի և արտահանման փաստաթղթերի հետ:
- Ստացեք պատշաճ կերպով տրամադրված հավաստագիրը և փոխանցեք այն ԵՄ ներմուծողին՝ ներմուծման մաքսային ընթացակարգի համար:


ԿԱՐԵՎՈՐ Է ***Դիմումի ընթացակարգը, իրավասու մարմինը և կիրառելի փաստաթղթերը պարտադիր ճշտեք մինչև առաքումը:***

5. Քայլ 5. Կազմել արտահանման և ծագման փաստաթղթերի փաթեթը

Յուրաքանչյուր առաքման համար ստեղծեք առանձին փաստաթղթային փաթեթ, որը թույլ կտա վերականգնել գործարքը և հիմնավորել ապրանքի ծագումը: Կախված ապրանքից և գործարքից՝ փաթեթը սովորաբար ներառում է.

- առևտրային հաշիվ-ապրանքագիր՝ հստակ ապրանքային նկարագրությամբ, քանակով, արժեքով և վաճառողի/գնորդի տվյալներով,
- փաթեթավորման ցուցակ և փոխադրման փաստաթղթեր,
- ՀԱ դասակարգման հիմնավորում, անհրաժեշտության դեպքում՝ մասնագիտական եզրակացություն կամ մաքսային որոշում,
- EUR.1 հավաստագիր կամ հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր (6 000 եվրոն գերազանցող առաքման դեպքում՝ ԳԱՀ-ի համարով),
- արտադրական գրառումներ, հումքի ու բաղադրիչների մատակարարների փաստաթղթեր, գնման հաշիվներ և պահեստային գրանցումներ,
- ծագման հաշվարկներ՝ կիրառելի կանոնը ցույց տալու համար,
- ապրանքի բնույթով պայմանավորված լիցենզիաներ, թույլտվություններ, սանիտարական, բուսասանիտարական, առողջության սերտիֆիկատներ, համապատասխանության և մակնշման փաստաթղթեր:

6. Քայլ 6. Հավելված II-ի սակագնային քվոտաները



Հավելված II-ում նշված ապրանքների համար արժեքային մաքսատուրքի ազատումը գործում է միայն կանոնակարգով սահմանված քանակային քվոտայի սահմաններում: Քվոտաները չափվում են տոննայով՝ օրացուցային տարվա համար: 2026 թվականին՝ կանոնակարգի ուժի մեջ մտնելու տարում, քվոտայի ժամանակահատվածը սկսվում է ուժի մեջ մտնելու օրը՝ 2026 թ. հոկտեմբերի 10-ին և ավարտվում է 2026 թ. դեկտեմբերի 31-ին: 2027 թվականից քվոտաները կբացվեն յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը՝ նույն ծավալներով: Քվոտայի շրջանակում զրոյացվում է միայն արժեքային մաքսատուրքը:

Աղյուսակ 3. Հավելված II-ի տարեկան քվոտաները

No	Ապրանք	Քվոտա (տոննա)	Քվոտայի նույնականացման համար
1)	Վարունգ կամ կորնիշոն՝ թարմ կամ պաղեցրած	6 500	090190
2)	Խաղող՝ թարմ կամ չորացրած	5 000	090191
3)	Տանձ՝ թարմ, լցոնովի, օգոստոսի 1-ից դեկտեմբերի 31-ը	750	090192
4)	Ծիրան՝ թարմ	7 000	090193
5)	Կեռաս՝ թարմ	2 000	090194
6)	Դեղձ և նեկտարին՝ թարմ	3 500	090195
7)	Սալոր՝ թարմ	1 500	090196
8)	Ելակ՝ թարմ	2 500	090197

6.1. Ինչպես են կառավարվում սակագնային քվոտաները

Սակագնային քվոտաների կառավարումը կարգավորվում է (ԵՄ) 2015/2447 կանոնակարգի 49–54-րդ հոդվածներով սահմանված պահանջների համաձայն:

- Յուրաքանչյուր քվոտա ունի համար (տես Աղյուսակ 3), որով այն նույնականացվում է ԵՄ մաքսային համակարգում:
- Հարցումները սովորաբար դիտարկվում են ԵՄ ներմուծման մաքսային հայտարարագրի ընդունման ամսաթվի հերթականությամբ:
- ԵՄ անդամ պետության մաքսային մարմինը ստուգում է, արդյոք ներմուծողի՝ քվոտայից օգտվելու պահանջը վավեր է և արդյոք ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերը: Այնուհետև հարցումը փոխանցվում է Եվրոպական հանձնաժողովին՝ նշելով հայտարարագրի ընդունման ամսաթիվն ու պահանջվող քանակը:
- Քանակները չեն կարող հատկացվել ավելի վաղ, քան հայտարարագրի ընդունումից հետո երկրորդ աշխատանքային օրը: Հանձնաժողովը հաշվի է առնում համապատասխան ժամկետում ստացված և դեռ չբավարարված հարցումները:
- Հատկացումը կատարվում է հասանելի մնացորդի սահմաններում: Եթե նույն ամսաթվով ընդունված հայտարարագրերի պահանջների գումարը գերազանցում է մնացորդը, այդ հարցումների համար քանակները կարող են բաշխվել համամասնորեն:
- Նոր բացված քվոտայի համար հատկացումը չի սկսվում մինչև քվոտան բացող ԵՄ կանոնակարգի հրապարակումից հետո 11-րդ աշխատանքային օրը:
- Եթե համապատասխան մաքսային հայտարարագիրը չեղարկվում է, պահանջը չեղարկվում է կամ արդեն հատկացված քանակը վերադարձվում է համակարգ:
- Քվոտան համարվում է կրիտիկական, երբ օգտագործվել է դրա ընդհանուր ծավալի 90%-ը: Որոշ դեպքերում այն կրիտիկական է համարվում հենց բացման օրվանից: 90% օգտագործումը ինքնին չի նշանակում, որ քվոտան ամբողջությամբ սպառված է:

- ԵՄ մաքսային մարմինների և Եվրոպական Հանձնաժողովի միջև հարցումների, հատկացումների, վերադարձների և մնացորդների տվյալների փոխանակումը կատարվում է նախատեսված էլեկտրոնային համակարգով:
- Քվոտայի հասանելիությունը պետք է ստուգի ԵՄ ներմուծողը՝ ԵՄ մաքսային տվյալների և իրավասու մաքսային մարմնի միջոցով: Արտահանողը չպետք է ենթադրի, որ ապրանքը կստանա քվոտային արտոնություն միայն այն պատճառով, որ ծածկագիրը ներառված է Հավելված II-ում: Քվոտան չի վերացնում ծագման կանոնների կամ այլ ներմուծման պահանջների կիրառությունը:
- Քվոտաների ընթացիկ մնացորդը կարելի է ստուգել Եվրոպական հանձնաժողովի սակագնային քվոտաների տվյալների բազայում. «Origin» դաշտում ընտրեք «Armenia», «Validity period» դաշտում՝ տարին, և սեղմեք «Search»: Արդյունքում երևում են յուրաքանչյուր քվոտայի համարը, գործողության սկիզբն ու ավարտը և մնացորդը (կիլոգրամով): «More info» հղումով կարելի է տեսնել լրացուցիչ տվյալներ, այդ թվում՝ քվոտայի կարգավիճակը: Տվյալները թարմացվում են յուրաքանչյուր հատկացումից հետո:

7. Քայլ 7. ԵՄ ներմուծողի հետ համագործակցության շրջանակը

- Մինչև առևտրային պայմանագրի վերջնականացումը հաստատեք ապրանքի ՀԱ ծածկագիրը և ԱԱԺՄ-ի կիրառելիությունը:
- ԵՄ ներմուծողին գրավոր տեղեկացրեք՝ ապրանքը Հավելված I-ի՞ց է, թե՞ Հավելված II-ից:
- Հավելված II-ի դեպքում ներմուծողի հետ ճշտեք քվոտայի համարը, ընթացիկ մնացորդը և քվոտայի պահանջի ներկայացման ընթացակարգը:
- Նախապես համաձայնեցրեք ծագման ապացույցի տեսակը, դրա տրամադրման ժամանակը և փաստաթղթերի փոխանցման եղանակը:
- Ստուգեք, որ հաշիվ-ապրանքագրի, փաթեթավորման ցուցակի, ծագման ապացույցի և մաքսային տվյալների ապրանքային նկարագրությունը, քանակը և այլ նույնականացնող տվյալները համընկնեն:
- Հստակեցրեք՝ որ ներմուծողն է կազմակերպում ԵՄ ներմուծման մաքսային ձևակերպումը և նա է պատասխանատու առևտրային արտոնության պահանջը ճիշտ ներկայացնելու համար:

7.1. ԵՄ ներմուծման մաքսային ձևակերպում

ԱԱԺՄ-ի արտոնությունը պահանջվում է ԵՄ ներմուծման պահին՝ ներմուծման մաքսային հայտարարագրի միջոցով: Հայկական արտահանողը պետք է ժամանակին փոխանցի ներմուծողին անհրաժեշտ փաստաթղթերը, սակայն ներմուծողը կամ նրա մաքսային ներկայացուցիչը պետք է համոզվի, որ մաքսային հայտարարագրում արտոնության պահանջը ներկայացվում է ճիշտ և առկա են պահանջվող ապացույցները:

- Ներմուծողը կամ նրա ներկայացուցիչը հայտարարագրում նշում է համապատասխան ապրանքային դասակարգումը և պահանջում կիրառելի ԱԱԺՄ արտոնությունը: Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիրը (անկախ առաքման արժեքից) մաքսային հայտարարագրում նշվում է N864 ծածկագրով, իսկ EUR.1 հավաստագիրը՝ N954 ծածկագրով:

- Հավելված II-ի ապրանքների դեպքում ստուգվում է նաև քվոտայի պահանջը և հասանելիությունը:
- Մաքսային մարմինը կարող է ստուգել ծագման ապացույցի իսկությունը, ապրանքի ծագումը, ապրանքի դասակարգումը և այլ հայտարարագրված տվյալներ:
- Արտոնությունը կիրառվում է միայն այն դեպքում, երբ բավարարված են իրավական պայմանները և համապատասխան ապացույցները ընդունելի են:

ԿԱՐԵՎՈՐ Է ***ԱԱԺՄ-ը վերաբերում է արժեքային ներմուծման մաքսատուրքերին: Ներմուծման ԱԱՀ-ն, ակցիզը, հակադեմպինգային կամ փոխհատուցման տուրքերը, ինչպես նաև արտադրանքի կարգավորիչ պահանջները պետք է ստուգվեն առանձին:***

8. Փաստաթղթերի պահպանում և ծագման ստուգում

ԵՄ իրավասու մարմինները կարող են ծագման ապացույցի հետ կապված ստուգումներ իրականացնել՝ ԵՄ և Հայաստանի իրավասու մարմինների վարչական համագործակցության շրջանակում: Եթե ծագումը չի հիմնավորվում կամ ապացույցը սխալ է, արտոնությունը կարող է մերժվել, իսկ ներմուծողից կարող են պահանջվել չվճարված մաքսատուրքերը և կիրառելի այլ վճարները:

Պահպանեք առնվազն հետևյալը.

- ✓ հաշիվներ, մատակարարման պայմանագրեր և հումքի/բաղադրիչների ծագման տվյալներ,
- ✓ արտադրության, պահեստի, խմբաքանակների և արտադրանքի հետագծելիության գրառումներ,
- ✓ ծագման կանոնի կատարման հաշվարկներ և օգտագործված ոչ ծագող նյութերի ցուցակներ,
- ✓ տրամադրված ծագման ապացույցների պատճեններ և դրանց հիմքում ընկած փաստաթղթեր,
- ✓ արտահանման, փոխադրման և մաքսային ձևակերպման փաստաթղթեր,
- ✓ ԵՄ ներմուծողի հետ քվոտայի և արտոնության կիրառման վերաբերյալ գրագրություն:

ԿԱՐԵՎՈՐ Է **[2015/2447 կանոնակարգի 91-րդ հոդվածի](#) համաձայն՝ համապատասխան փաստաթղթերը, ընդհանուր կանոնով, պետք է պահպանվեն առնվազն երեք տարի՝ այն օրացուցային տարվա ավարտից, որի ընթացքում կազմվել է ծագման հայտարարագիրը:**

9. Գործնական օրինակ

Օրինակ. 25 000 եվրո արժողությամբ խաղողի արտահանում

Ենթադրենք՝ «Հայ խաղող» գյուղացիական տնտեսությունը Արարատի մարզի Մասիս համայնքում աճեցված թարմ խաղող է արտահանում ԵՄ՝ 25 000 եվրո ընդհանուր արժեքով: Խաղողը դասակարգվում է CN 0806 ծածկագրով և ներառված է (ԵՄ) 2026/2269 կանոնակարգի Հավելված II-ում՝ տարեկան 5 000 տոննա սակագնային քվոտայով:

Ի՞նչ արտոնություն է կիրառվում: ԱԱԺՄ-ի շրջանակում խաղողի նկատմամբ զրոյացվում է արժեքի նկատմամբ տոկոսով հաշվարկվող մաքսատուրքը, սակայն կարող է պահպանվել ֆիքսված գումարով հաշվարկվող լրացուցիչ մաքսատուրքը, օրինակ՝ եթե ներմուծման գինը ցածր է ԵՄ սահմանած մուտքի գնից: Արտոնությունը կիրառվում է քվոտայի

սահմաններում, ուստի ԵՄ ներմուծողը պետք է ստուգի դրա հասանելիությունը և ներմուծման պահին պահանջի արտոնյալ սակագնային ռեժիմը:

Ինչպե՞ս ապացուցել հայկական ծագումը: Քանի որ խաղողն ամբողջությամբ աճեցվել և հավաքվել է Հայաստանում, դրա հայկական ծագումն ապացուցելը համեմատաբար պարզ է: Օրինակ՝ կարելի է ներկայացնել համապատասխան իրավասու մարմնի կամ այլ ընդունելի աղբյուրի փաստաթուղթ, որը հաստատում է, որ խաղողն աճեցվել է «Հայ խաղող» տնտեսության կողմից՝ Արարատի մարզի Մասիս համայնքում: Փաստաթուղթը պետք է բավարար լինի կիրառելի ծագման կանոններին համապատասխանությունն ապացուցելու համար:

Ի՞նչ ծագման ապացույց է անհրաժեշտ: Քանի որ առաքման արժեքը գերազանցում է 6 000 եվրոն, հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր կազմելու համար արտահանողը պետք է գրանցված լինի ԳԱՀ-ում և հայտարարագրում նշի իր ԳԱՀ համարը: Միայն ծագման մասին տեղեկանք ունենալը չի փոխարինում մաքսային արտոնության համար պահանջվող ծագման ապացույցին:

10. Արտահանողի ինքնաստուգման ցանկ

- ☐ Սահմանել եմ ԵՄ ներմուծման ճիշտ ՀԱ ծածկագիրը:
- ☐ Ստուգել եմ (ԵՄ)2026/2269 կանոնակարգի Հավելված I-ը և Հավելված II-ը:
- ☐ Հստակ գիտեմ՝ ապրանքը Հավելված I-ի՞ց է, թե՞ Հավելված II-ից:
- ☐ Եթե ծածկագիրը նշված է «ex»-ով, ստուգել եմ նաև ապրանքի նկարագրությունը:
- ☐ Գտել և փաստաթղթավորել եմ կիրառելի արտոնյալ ծագման կանոնը:
- ☐ Ունեմ հումքի, բաղադրիչների, արտադրական գործընթացի և խմբաքանակի հետագծելիության ապացույցներ:
- ☐ Ընտրել եմ ծագման ապացույցի ճիշտ ուղին՝ հաշվի առնելով 6 000 եվրոյի շեմն ու ԳԱՀ-ում գրանցման պահանջը:
- ☐ Ծագման ապացույցում ներառված են պահանջվող ձևակերպումներն ու տվյալները, այդ թվում՝ «Autonomous trade measures» նշումը:
- ☐ Հավելված II-ի դեպքում ԵՄ ներմուծողի հետ ստուգել եմ քվոտայի համարը և հասանելիությունը:
- ☐ ԵՄ ներմուծողին փոխանցել եմ մաքսային ձևակերպման համար անհրաժեշտ փաստաթղթերը:
- ☐ Կազմակերպել եմ փաստաթղթերի պահպանումը՝ հետագա ստուգման համար:

11. Սխալներ, որոնցից պետք է խուսափել

1) ԵՄ ՀԱ ծածկագիրը որոշել միայն ապրանքի առևտրային անվանումից:
2) Ենթադրել, որ բոլոր հայկական ապրանքներն օգտվում են ԱԱԺՄ-ից:
3) Շփոթել Հավելված I-ի արտոնությունն ու Հավելված II-ի քվոտային արտոնությունը:
4) Անտեսել «ex» նշումը կամ դրա հետ կապված ապրանքի նկարագրությունը:
5) Ծագումը համարել հայկական միայն այն պատճառով, որ ապրանքը վաճառվում կամ ուղարկվում է Հայաստանից:
6) Օգտագործել հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր՝ առանց 6 000 եվրոյի շեմի և ԳԱՀ-ի կիրառելիության ստուգման:
7) Ենթադրել, որ ԳԱՀ-ում գրանցումը պարտադիր է բոլոր առաքումների համար: Մինչև 6 000 եվրո արժեքով առաքման դեպքում ծագման մասին հայտարարագիր կարող է կազմել

ցանկացած արտահանող, առանց ԳԱՀ-ում գրանցման՝ սահմանված պայմանների պահպանմամբ:

8) Չներառել «Autonomous trade measures» կամ «Mesures commerciales autonomes» պահանջվող նշումը:
9) Համարել, որ մաքսատուրքի արտոնությունը վերացնում է ԱԱՀ-ն, սննդամթերքի անվտանգության կամ այլ ներմուծման պահանջները:
10) Չպահպանել ծագումը հիմնավորող արտադրական և մատակարարման փաստաթղթերը:

12. Հաճախ տրվող հարցեր

1. Ի՞նչ են առևտրի ազատականացման ժամանակավոր միջոցները (ԱԱԺՄ), և ի՞նչ առավելություններ են դրանք տալիս հայ արտահանողներին:

ԱԱԺՄ-ները ԵՄ-ի կողմից Հայաստանից ներմուծվող որոշ ապրանքների համար նախատեսված ժամանակավոր առևտրային արտոնություններ են, որոնք կարող են հեշտացնել հայկական արտադրանքի մուտքը ԵՄ շուկա և բարձրացնել արդեն իսկ ԵՄ արտահանվող ապրանքների մրցունակությունը:

2. Ո՞ր ապրանքներն են օգտվում ԱԱԺՄ-ներից:

Արտոնությունները վերաբերում են ԵՄ համապատասխան իրավական ակտի՝ ԵՄ 2026/2269 կանոնակարգի Հավելված I-ում և Հավելված II-ում ներառված ապրանքներին: Ցանկը ներառում է ինչպես պարենային այնպես էլ արդյունաբերական ապրանքներ:

3. Ի՞նչ տարբերություն կա կանոնակարգի Հավելված I-ի և Հավելված II-ի ապրանքների միջև:

- **Հավելված I.** նշված ապրանքների համար նախատեսված է ներմուծման մաքսատուրքի վերացում՝ կանոնակարգով սահմանված պայմաններով:
- **Հավելված II.** ապրանքներն օգտվում են արտոնությունից սահմանված սակագնային քվոտայի շրջանակում: Քվոտայի սպառման դեպքում կարող է կիրառվել սովորական մաքսատուրքը:

4. Ինչպե՞ս պարզել՝ արդյոք իմ ապրանքը կարող է օգտվել արտոնությունից:

Անհրաժեշտ է՝

- պարզել ապրանքի ծածկագիրը,
- ստուգել՝ արդյոք այն ներառված է կանոնակարգի Հավելված I-ում կամ Հավելված II-ում,
- ծանոթանալ ապրանքի ծագման կանոնին: Արտոնությունից կարող է օգտվել միայն արտոնյալ ծագում ունեցող ապրանքը,
- Հավելված II-ի դեպքում ստուգեք սակագնային քվոտայի հասանելիությունը:

Այս տեղեկությունները կարելի է գտնել ԵՄ-ի Մուտք շուկաներ **Access2Markets** հարթակում և համապատասխան իրավական ակտում:

5. Ի՞նչ է նշանակում ապրանքի արտոնյալ ծագումը:

Արտոնյալ ծագումը նշանակում է, որ ապրանքը համապատասխանում է ԵՄ կանոններով սահմանված՝ Հայաստանի ծագում ունենալու պահանջներին: Միայն Հայաստանում արտադրվելը կամ Հայաստանից արտահանվելը բավարար չէ բոլոր դեպքերում: Եթե ապրանքը ամբողջությամբ աճեցվել և հավաքվել է Հայաստանում, ծագումը սովորաբար ավելի հեշտ է հիմնավորել: Այլ դեպքերում անհրաժեշտ է ստուգել տվյալ ապրանքի համար սահմանված ծագման հատուկ կանոնը:

6. Ինչպե՞ս հաստատել արտոնյալ ծագումը: Ի՞նչ է նշանակում ապրանքի արտոնյալ ծագումը:

Արտոնյալ ծագումը հաստատելու եղանակները՝

1. Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր՝ մինչև 6 000 եվրո: Կարող է կազմել ցանկացած արտահանող՝ առանց ԵՄ Գրանցված արտահանողների համակարգում (այսուհետ՝ ԳԱՀ, անգլերեն՝ REX) գրանցվելու:
2. Հաշիվ-ապրանքագրի հայտարարագիր՝ 6 000 եվրոյից ավելի: Արտահանողը պետք է գրանցված լինի ԳԱՀ-ում և նշի իր գրանցման համարը:
3. EUR.1 շարժման հավաստագիր: Կարող է կիրառվել ցանկացած արժեքով առաքման համար՝ առանց ԳԱՀ-ում գրանցվելու: ՀՀ-ում տրամադրման կարգը դեռ հստակեցված չէ:

7. Ի՞նչ է Գրանցված արտահանողների համակարգը (ԳԱՀ, REX), և արդյո՞ք գրանցումը պարտադիր է:

ԳԱՀ-ը հնարավորություն է տալիս համապատասխան պայմանների պահպանմամբ կազմել ապրանքի ծագման մասին հայտարարագիր՝ նշելով արտահանողի ԳԱՀ-ում գրանցման համարը:

Մինչև 6 000 եվրո ընդհանուր արժեքով ծագում ունեցող ապրանքների առաքման դեպքում հայտարարագիր կարող է կազմել նաև ԳԱՀ-ում չգրանցված արտահանողը՝ սահմանված պայմանների պահպանմամբ: Այդ շեմը գերազանցող առաքման դեպքում արտոնությունից օգտվելու նպատակով ծագման մասին հայտարարագիր կազմելու համար արտահանողը պետք է գրանցված լինի ԳԱՀ-ում:

8. Ինչպե՞ս գրանցվել ԳԱՀ-ում:

Գրանցման ընթացակարգի, պահանջվող փաստաթղթերի և դիմումի ներկայացման կարգի վերաբերյալ տեղեկություն ստանալու համար դիմեք ՀՀ էկոնոմիկայի նախարարության՝ ԵՄ-ի հետ տնտեսական համագործակցության վարչություն: Գրանցման հայտում անհրաժեշտ է ներկայացնել ընկերության գրանցման, հասցեի, կոնտակտային տվյալների և գործունեության վերաբերյալ պահանջվող տեղեկությունները:

9. Կարո՞ղ եմ օգտվել EUR.1 շարժման հավաստագրից:

Դեռևս ոչ: ՀՀ-ում EUR.1-ի տրամադրման ընթացակարգի գործարկումից հետո ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պաշտոնապես կտեղեկացնի դրա տրամադրման և ԵՄ-ում ընդունման կարգի մասին:

10. Ի՞նչ է տեղի ունենում, եթե Հավելված II-ի ապրանքի սակագնային քվոտան սպառվել է:

Եթե տվյալ ապրանքի համար նախատեսված սակագնային քվոտան սպառվել է, արտոնյալ մաքսատուրքի կիրառումը այլևս հասանելի չէ: Արտահանողին և ներմուծողին խորհուրդ է տրվում նախապես ստուգել քվոտայի մնացորդը և արտոնության կիրառման պայմանները՝ հաշվի առնելով, որ մաքսատուրքի կիրառման հարցը որոշվում է ԵՄ ներմուծման պահին:

11. ԱԱԺՄ-ները վերացնո՞ւմ են ԱԱՀ-ն և ներմուծման մյուս պահանջները:

Ո՛չ: ԱԱԺՄ-ները վերաբերում են միայն առժեքային մաքսատուրքին: Դրանք չեն վերացնում ԱԱՀ-ն, արտադրանքի անվտանգության և որակի պահանջները, սանիտարական ու բուսասանիտարական կանոնները, սերտիֆիկացման կամ ներմուծման այլ կիրառելի պահանջները:

Հավելված 1. Ապրանքների արտոնյալ ծագման որոշման և հաստատման հիմնական կանոնները

Բացատրական ամփոփում՝ հիմնված Հանձնաժողովի պատվիրակված (ԵՄ) 2015/2446 կանոնակարգի 59–70-րդ հոդվածների վրա

1) Ի՞նչ է նշանակում ապրանքի արտոնյալ ծագումը

ԵՄ ԱԱԺՄ-ից օգտվելու համար բավարար չէ, որ ապրանքն արտահանվի Հայաստանից: Այն պետք է համապատասխանի Հայաստանից ծագող ապրանքների նկատմամբ կիրառվող ԵՄ ծագման կանոններին:

Ապրանքը կարող է համարվել Հայաստանից ծագող, եթե՝

- այն ամբողջությամբ ստացվել կամ արտադրվել է Հայաստանում, կամ
- այն արտադրվել է Հայաստանում՝ օգտագործելով նաև այլ երկրներից ծագող նյութեր, և այդ նյութերը ենթարկվել են համապատասխան ծագման կանոններով պահանջվող բավարար մշակման կամ վերամշակման:

Ապրանքի ծագումը որոշվում է ոչ միայն այն հիմքով, թե որտեղից է այն առաքվում կամ որտեղ է վաճառողը գրանցված, այլև հաշվի առնելով դրա արտադրության գործընթացը և օգտագործված նյութերի ծագումը:

2) Ամբողջությամբ ստացված կամ արտադրված ապրանքներ

Ամբողջությամբ Հայաստանում ստացված կամ արտադրված ապրանքների օրինակներ են՝

- Հայաստանում արդյունահանված հանքային արտադրանքը,
- Հայաստանում հավաքված բուսական արտադրանքը,
- Հայաստանում ծնված և աճեցված կենդանիները և դրանցից ստացված արտադրանքը,
- արտադրական գործընթացներում առաջացած թափոններն ու ջարդոնը,
- վերը նշված ապրանքներից բացառապես Հայաստանում արտադրված ապրանքները:

3) Բավարար վերամշակման պահանջը

Եթե ապրանքի արտադրության ընթացքում օգտագործվել են ոչ հայկական ծագում ունեցող նյութեր, ապա ապրանքը կարող է ստանալ հայկական ծագում միայն այն դեպքում, երբ Հայաստանում իրականացված վերամշակումը համապատասխանում է տվյալ ապրանքի համար սահմանված կանոնին:

Բավարար վերամշակման պահանջները սահմանվում են ԵՄ մաքսային օրենսդրության համապատասխան ապրանքային ցանկով՝ Հանձնաժողովի պատվիրակված կանոնակարգի (ԵՄ) 2015/2446 Հավելված 22-11-ով: Պահանջները կարող են տարբերվել՝ կախված ապրանքի դասակարգման ծածկագրից:

Ուստի արտահանողը պետք է՝

- որոշի ապրանքի ճիշտ ՀԱ ծածկագիրը,
- ստուգի այդ ապրանքի նկատմամբ կիրառվող ծագման հատուկ կանոնը,
- պարզի՝ օգտագործված ոչ ծագում ունեցող նյութերի նկատմամբ ինչ մշակման կամ վերամշակման պահանջներ են սահմանված,
- պահպանի արտադրական գործընթացը և նյութերի ծագումը հաստատող փաստաթղթերը:

4) Ո՞ր գործողությունները սովորաբար բավարար չեն ծագում տրամադրելու համար

Որոշ պարզ գործողություններ, նույնիսկ եթե կատարվում են Հայաստանում, ինքնուրույն չեն ապահովում ապրանքի հայկական ծագումը: Դրանց թվում են՝

- ապրանքի լվացումը կամ մաքրումը,
- փաթեթների բաժանումը կամ հավաքումը,
- պարզ ներկումը կամ փայլեցումը,
- ապրանքի տեսակավորումը, դասակարգումը կամ չափաբաժանումը,
- պիտակների, տարբերանշանների կամ մակնշման տեղադրումը,
- պարզ փաթեթավորումը՝ շշերի, տուփերի, պարկերի կամ այլ տարաների մեջ,
- տարբեր ապրանքների պարզ խառնումը,
- ջրի պարզ ավելացումը կամ նոսրացումը,
- մասերի պարզ հավաքումը՝ պատրաստի արտադրանք ստանալու նպատակով,
- կենդանիների սպանդը:

Նշված գործողությունների համակցությունը նույնպես կարող է համարվել անբավարար վերամշակում: Գնահատելիս հաշվի են առնվում տվյալ ապրանքի նկատմամբ կատարված բոլոր համապատասխան գործողությունները, այլ ոչ թե միայն դրանցից մեկը:

Գործնական հետևություն. ապրանքի փաթեթավորումը, պիտակավորումը կամ Հայաստանից արտահանելը ինքնին չի նշանակում, որ ապրանքը ձեռք է բերել հայկական արտոնյալ ծագում:

5) Ոչ ծագում ունեցող նյութերի թույլատրելի շեմը

Հանձնաժողովի պատվիրակված (ԵՄ) 2015/2446 կանոնակարգի 64-րդ հոդվածը նախատեսում է ընդհանուր թույլատրելի շեմ. որոշ պայմաններով ոչ ծագում ունեցող նյութերի ընդհանուր արժեքը կարող է չգերազանցել պատրաստի ապրանքի՝ գործարանից բացթողման գնի (ex-works price) 10%-ը: 10% թույլատրելի շեմը չի փոխարինում ապրանքի համար սահմանված հատուկ ծագման կանոնին և չի կարող օգտագործվել այդ կանոնով նախատեսված առավելագույն սահմանաչափը գերազանցելու համար: Սակայն այս դրույթը չի կարող կիրառվել մեխանիկորեն բոլոր ապրանքների նկատմամբ: Եթե տվյալ ապրանքի հատուկ կանոնը սահմանում է ոչ ծագում ունեցող նյութերի առավելագույն արժեքի կամ այլ պայմանների վերաբերյալ առանձին պահանջներ, դրանք նույնպես պետք է պահպանվեն: Ընդհանուր 10% թույլատրելի շեմը չի կիրառվում ՀԱ 50–63-րդ գլուխների ապրանքների նկատմամբ:

Հետևաբար, արտահանողը պետք է նախ ստուգի ապրանքի հատուկ ծագման կանոնը և միայն դրանից հետո գնահատի՝ արդյոք կարող է կիրառել ընդհանուր թույլատրելի շեմը:

6) Հավաքածուներ, պարագաներ և արտադրության համար օգտագործվող օժանդակ միջոցներ

Հանձնաժողովի պատվիրակված (ԵՄ) 2015/2446 կանոնակարգի 65-67 հոդվածները նախատեսում է նաև որոշ հատուկ կանոններ:

- **Հավաքածուներ.** ընդհանուր կանոնով հավաքածուն համարվում է Հայաստանի ծագում ունեցող, եթե դրա բոլոր բաղադրիչ ապրանքները Հայաստանի ծագում ունեն: Եթե հավաքածուն ներառում է նաև ոչ ծագում ունեցող ապրանքներ, այն կարող է համարվել Հայաստանի ծագում ունեցող, եթե այդ ապրանքների արժեքը չի գերազանցում հավաքածուի գործարանից բացթողման «ex-works» գնի 15%-ը:
- **Պարագաներ, պահեստամասեր և գործիքներ.** սարքավորման, մեքենայի կամ մեքենայի/տրանսպորտային միջոցի հետ ուղարկվող՝ դրա սովորական համալրման մաս կազմող և գնի մեջ ներառված կամ առանձին չհաշվարկված պարագաները կարող են դիտարկվել հիմնական ապրանքի հետ միասին:

- **Չեզոք տարրեր.** ապրանքի ծագումը որոշելիս անհրաժեշտ չէ պարզել արտադրության համար օգտագործված էներգիայի, վառելիքի, սարքավորումների, մեքենաների և գործիքների ծագումը, եթե դրանք չեն մտնում պատրաստի ապրանքի կազմի մեջ:

7) Ծագման շարունակականություն և տարածքային պահանջներ

Ծագման կարգավիճակ ձեռք բերելու համար անհրաժեշտ պայմանները պետք է պահպանվեն համապատասխան տարածքում: Եթե ծագող ապրանքն արտահանվել է այլ երկիր, այնուհետև վերադարձվել, ընդհանուր կանոնով այն դիտարկվում է որպես ոչ ծագող, եթե իրավասու մարմնին չի ապացուցվում, որ՝

- վերադարձված ապրանքը նույնն է, ինչն արտահանվել էր,
- արտահանման և վերադարձի ընթացքում կատարվել են միայն ապրանքը պատշաճ վիճակում պահպանելու համար անհրաժեշտ գործողություններ:

8) Ապրանքի տեղափոխումը դեպի ԵՄ

Արտոնյալ ծագման կանոններով նախատեսված պայմանները պահպանելու համար կարևոր է նաև ապրանքի տեղափոխման ուղին:

Ապրանքը կարող է համարվել անմիջապես տեղափոխված Հայաստանից ԵՄ, եթե՝

- այն տեղափոխվել է առանց այլ երկրի տարածքով անցնելու, կամ
- այն տարանցվել է մեկ կամ մի քանի այլ երկրների տարածքով՝ մնալով մաքսային հսկողության ներքո և ենթարկվելով միայն բեռնաթափման, վերաբեռնման կամ պատշաճ վիճակում պահպանելու համար անհրաժեշտ գործողությունների:

Քանի որ Հայաստանից ԵՄ արտահանումները, որպես կանոն, տարանցվում են այլ երկրների տարածքով, անհրաժեշտ է նախապես ապահովել տարանցումը հիմնավորող փաստաթղթերը: Տարանցման դեպքում արտահանողը կամ ներմուծողը պետք է անհրաժեշտության դեպքում կարողանա ներկայացնել համապատասխան ապացույցներ, օրինակ՝ ամբողջ երթուղին ընդգրկող միասնական տրանսպորտային փաստաթուղթ, տարանցման երկրի մաքսային մարմնի վկայական կամ այլ հիմնավորող փաստաթղթեր:

9) Ցուցահանդեսների համար արտահանված ապրանքներ

ԵՄ անդամ երկրում ցուցահանդեսի մասնակցելու նպատակով ուղարկված ապրանքները կարող են օգտվել ԱԱԺՄ-ից, եթե հետագայում վաճառվում են ԵՄ ներմուծման համար և պահպանվում են սահմանված պայմանները: Մասնավորապես, պետք է հաստատվի, որ ապրանքները՝

- ուղարկվել են Հայաստանից ցուցահանդեսի երկիր և ցուցադրվել այնտեղ,
- վաճառվել կամ փոխանցվել են ԵՄ-ում գտնվող անձի,
- ցուցահանդեսի ընթացքում կամ դրանից անմիջապես հետո ուղարկվել են ԵՄ՝ այն վիճակում, որով ներկայացվել էին ցուցահանդեսին,
- ցուցահանդեսի ընթացքում չեն օգտագործվել այլ նպատակով, բացի ցուցադրման նպատակով օգտագործելուց:

Այս դեպքերում (ԵՄ) 2015/2446 կանոնակարգի 70-րդ հոդվածը նախատեսում է EUR.1 շարժման հավաստագիր ներկայացնելու պահանջ՝ ցուցահանդեսի անվանման և հասցեի նշումով: Մաքսային մարմինները կարող են պահանջել նաև լրացուցիչ փաստաթղթեր:

ԿԱՐԵՎՈՐ Է այս հավելվածը բացատրական ամփոփում է և չի փոխարինում ԵՄ օրենսդրության պաշտոնական տեքստին: Ապրանքի ծագման վերջնական գնահատումը պետք է կատարել՝ հաշվի առնելով կոնկրետ ապրանքի դասակարգումը, դրա համար սահմանված հատուկ ծագման կանոնը և կիրառելի իրավական ակտերը:

Հավելված 2. ԱԱԺՄ-ից օգտվելու գործընթացի հոսքագիծ

